ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4332-Ա «04» սեպտեմբերի 2026 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 20-Ի Հ.4087-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հաշվի առնելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.24082026-01-0194 վկայականը, ՀՀ կադաստրի կոմիտեի հ.ԳՄ/18469-2026 գրությունը.

1. Երևանի քաղաքապետի 2026 թվականի օգոստոսի 20-ի «Երևան, Ավան, Մարշալ Բաբաջանյան փողոց հ.1/1 հասցեում՝ սեփականության իրավունքով «ՌՈԲԵՐՏ-ՏԱՐՈՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող հողամասում գտնվող ինքնակամ կառույցն օրինականացնելու մասին» հ.4087-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման 1-ին կետում «(անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.22062026-01-0035 վկայական)» և «143.08քառ.մետր ընդհանուր մակերեսով կառույցը (արտադրական /ծածկ/)» բառերը փոխարինել համապատասխանաբար «(անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.24082026-01-0194 վկայական)» և «176.15 քառ.մետր ընդհանուր մակերեսով կառույցը (արտադրական շինություններ)» բառերով,

2) Որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետում «952269 (ինը հարյուր հիսուներկու հազար երկու հարյուր վաթսունինը)» բառերը փոխարինել «1172367 (մեկ միլիոն մեկ հարյուր յոթանասուներկու հազար երեք հարյուր վաթսունյոթ)» բառերով,

3) Որոշման 3-րդ կետի 1-ին և 4-րդ ենթակետերով նախատեսված ժամկետը սահմանել 60-օրյա սույն որոշման ընդունման պահից:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին, կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ